ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

5/108

„25“ 12 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 20 -ի թիվ 11 նիստի որոշումները:

Առդիր „15“ թերթից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12631-11
„27“ 12 2011 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ**
**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի դեկտեմբերի 20

N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12 - րդ հոդվածի 4-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ա ն ու   ա ն դ ա մ ն ե ր

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ի.Ազիզյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Գ.Կարապետյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ա.Սարգսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ս.Ստեփանյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Թ.Աղայան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Թ.Պողոսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Կ.Հարությունյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Գ.Նազարյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ս.Փիրոյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Մ.Մարտիրոսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ա.Ավագյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |

*Համայնքի ղեկավար՝* *Ռ.Ֆ.Մարգարյան*

2011 թվականի դեկտեմբերի 20
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր գյուղական համայնքի
ավագանու 2011թ դեկտեմբերի 20
թիվ 11 նիստի թիվ 1 որոշման

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

20 դեկտեմբերի 2011թ. թիվ 2 - Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18- կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Քվեարկություն`կողմ 11 անդամ,դեմ չկա,ձեռնպահ չկա:

Թ.Պողոսյան
Ի.Ազիզյան
Ա.Սարգսյան
Ս.Ստեփանյան
Թ.Աղայան
Ա.Ավագյան
Կ.Հարությունյան
Գ.Կարապետյան
Գ.Նազարյան
Ս.Փիրոյան
Մ.Մարտիրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ռ.Ֆ.ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 20
գ.Արմավիր

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ի
N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նորշենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տասնհինգ հազար դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեսուն հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տասնհինգ հազար դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվոոությունն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախածով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույ ն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ

կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ:

2/ ծխախոտի արտադրաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.

բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24օօ -ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.

գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար մեկ հազար դրամ.

բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար՝հինգ հարյուր դրամ.

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զրո դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հարյուր դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ*
*ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*

---

20 դեկտեմբերի 2011թ. թիվ 3 - Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19- կետով,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղական համայնքի կողմից 2012 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
Քվեարկություն՝կողմ 11 անդամ,դեմ չկա,ձեռնպահ չկա:

Թ.Պողոսյան
Ի.Ազիզյան
Ա.Սարգսյան
Ս.Ստեփանյան
Թ.Աղայան
Ա.Ավագյան
Կ.Հարությունյան
Գ.Կարապետյան
Գ.Նազարյան
Ս.Փիրոյան
Մ.Մարտիրոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ֆ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 20
գ.Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի
N 34 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ... 0440 ... 48

## ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝
1/ համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.
2/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.
3/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.
4/ համայնքի բնակիչ համարվող անձանց՝նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների՝բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝մեկ հազար դրամ.
2. Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց՝մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝
1/ աղբահանության համար՝մեկ անձին՝մեկ ամսվա համար՝մեկ հարյուր դրամ:
3. Համայնքային ենթակայության մանկական երաժշտական դպրոց և մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել ամսական երեք հազար դրամ.
1/ համայնքի բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝
ա/ մեկ ընտանիքից երկու և ավելի երեխաների համար՝ 75 տոկոսի չափով՝երկու հազար երկու հարյուր հիսուն դրամ.
բ/ միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝50 տոկոսի չափով՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.
գ/ երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝25 տոկոսի չափով՝յոթ հարյուր հիսուն դրամ.
դ/ զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի դեկտեմբերի 20 N 4-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով.

## Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը,հաստիքացուցակը և դրույքաչափերը՝համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
   Քվեարկություն՝ կողմ 11անդամ, դեմ չկա,ձեռնպահ չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Պողոսյան Թամարա
2. Կարապետյան Գևորգ
3. Սարգսյան Արմեն
4. Ստեփանյան Սամվել
5. Աղայան Թեմուր
6. Ազիզյան Իշխան
7. Հարությունյան Կարեն
8. Նազարյան Գևորգ
9. Փիրոյան Սամվել
10. Մարտիրոսյան Մկրտիչ
11. Ավագյան Անդրեաս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 20

գ. Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արմավիր գյուղական համայնքի
ավագանու 2011թ. դեկտեմբերի 20
թիվ 11 նիստի թիվ 4 որոշման

ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2011թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) | 2012թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 180.0 | 180.0 | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 82.0 | 97.0 | |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 65.0 | 80.0 | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար | 1.2--1 | 1 | 85.0 | 101.0 | |
| 5 | Առաջատար մասնագետ | 3.1--1 | 1 | 80.0 | 90.0 | |
| 6 | Առաջատար մասնագետ | 3.1--2 | 1 | 80.0 | 90.0 | |
| 7 | Առաջատար մասնագետ | 3.1--3 | 1 | 80.0 | 90.0 | |
| 8 | 1-ին կարգի մասնագետ | 3.2--1 | 1 | 60.0 | 70.0 | |
| 9 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-2 | 1 | 60.0 | 70.0 | |
| 10 | 2-րդ կարգի մասնագետ | 3.3-1 | 1 | 49.0 | 65.0 | |
| 11 | վարորդ | | 1 | 35.0 | 45.0 | |
| 12 | կատարածու | | 1 | 35.0 | 45.0 | |
| 13 | գործավար | | 1 | 50.0 | 55.0 | |
| 14 | պահակ | | 1 | 65.0 | 65.0 | |
| 15 | պահակ | | 1 | 33.0 | 38.0 | |
| 16 | հավաքարար | | 1 | 35.0 | 40.0 | |
| 17 | Գրադարանի վարիչ | | 1 | 35.0 | 45.0 | |
| 18 | Մշակույթի տան տնօրեն | | 1 | 45.0 | 60.0 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 19 | Բեմադրիչ ռեժիսոր | | 1 | 40.0 | 50.0 | |
| 20 | Յավաքարար | | 1 | 35.0 | 40.0 | |
| 21 | պահակ | | | 40.0 | 50.0 | |
| 22 | Մանկապարտեզի վարիչ | | 1 | 65.0 | 67.0 | |
| 23 | Դաստիարակ | | 0.5 | 33.0 | 33.0 | |
| 24 | Դաստիարակ | | 0.5 | 33.0 | 33.0 | |
| 25 | Դաստիարակ | | 0.5 | 33.0 | 33.0 | |
| 26 | Դաստիարակ | | 0.5 | 33.0 | 33.0 | |
| 27 | հաշվապահ | | 1 | 40.0 | 40.0 | |
| 28 | Դաստիարակի օգնական | | 1 | 33.0 | 33.0 | |
| 29 | Դաշնակահար | | 1 | 33.0 | 33.0 | |
| 30 | Խոհարար | | 1 | 33.0 | 33.0 | |
| 31 | բուժքույր | | | 0.0 | 33.0 | |
| 32 | այգեպան | | 1 | 33.0 | 33.0 | |
| 33 | Երաժշտական դպրոցի տնօրեն | | | 64.0 | 64.0 | |
| 34 | ուսմասվար | | | 32.5 | 37.0 | |
| 35 | հաշվապահ | | | 0.0 | 45.0 | |
| 36 | քանոնի ուսուց. | | | 39.0 | 50.0 | |
| 37 | շվիի ուսուց. | | | 42.0 | 55.0 | |
| 38 | դաշնամուրի ուսուց. | | | 32.5 | 37.0 | |
| 39 | վոկալի ուսուց. | | | 32.5 | 28.0 | |
| 40 | դաշնամուրի ուսուց. | | | 37.0 | 38.0 | |
| 41 | դաշնամուրի ուսուց. | | | | 36.0 | |
| 42 | դաշնամուրի ուսուց. | | | 35.0 | 29.0 | |
| 43 | դաշնամուրի ուսուց. | | | 35.0 | 26.0 | |
| 44 | սոլֆեջիոյի ուսուց. | | | 32.5 | 34.0 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

« 20» դեկտեմբերի 2011թ. թիվ 5 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2012 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝55600.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 55600.0 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Յաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Յաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Յաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՅԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Պողոսյան Թամարա
2. Կարապետյան Գևորգ
3. Սարգսյան Արմեն
4. Ստեփանյան Սամվել
5. Աղայան Թեմուր
6. Ազիզյան Իշխան
7. Յարությունյան Կարեն
8. Նազարյան Գևորգ
9. Փիրոյան Սամվել
10. Մարտիրոսյան Մկրտիչ
11. Ավագյան Անդրեաս

ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2011 թվականի դեկտեմբերի 20

գ. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թվականի դեկտեմբերի 20 N 6

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Արմավիր համայնքի 35 սոց.անապահով ընտանիքի հատկացնել 550000/հինգ հարյուր հիսուն հազար / դրամ, դրամական օգնություն, որից 30 ընտանիքի՝15000 /տասնհինգ հազար/-ական դրամ, 5 ընտանիքի 20000/քսան հազար/ -ական դրամ.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա վ ա գ ա ն ու ա ն դ ա մ ն ե ր

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ի.Ազիզյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Գ.Կարապետյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ա.Սարգսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ս.Ստեփանյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Թ.Աղայան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Թ.Պողոսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Կ.Հարությունյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Գ.Նազարյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ս.Փիրոյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Մ.Մարտիրոսյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |
| Ա.Ավագյան | (ստորագրություն) | (ստորագրություն) | |

*Համայնքի ղեկավար՝* *Ռ.Ֆ.Մարգարյան*

2011 թվականի դեկտեմբերի 20
գ.Արմավիր